

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՊԱՏՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Ռ. Պ. ԶՈՒԼՖԱՅԱՆ

Խ.Արովյանի անվան ՀՊՄՀ,

Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամ

rrdzh@mail.ru

Գ. Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամ,

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր

jaagayane@yahoo.com

Ս. Ֆ. ԹՈՐԳՈՄՅԱՆ

Խ.Արովյանի անվան ՀՊՄՀ

sofitorgomyan@gmail.com

Հոդվածը նվիրված է հայկական տեղանունների անվանապատման ուսուցմանը ավագ դպրոցի 11-րդ դասարանում: Հայկական տեղանունների ստուգաբանության ուսումնասիրությունը, որն իրականացվում է տարբեր աղբյուրների համեմատական վերլուծության միջոցով, հիմնալի նյութ է տրամադրում հետաքրքիր և նորարարական մեթոդներով հետազոտությունների համար: Առաջարկվող մեթոդը՝ դեպքի ուսումնասիրությունը, հնարավորություն կտա ավագ դպրոցի աշակերտներին համապարփակ կերպով ուսումնասիրել նյութը, բացահայտել տեղանունների ծագման հետաքրքիր և երբեմն զարմանալի կողմերը, վերլուծել դրանք և եզրակացություններ անել՝ քննադատական մտածողության հմտությունների զարգացման գործում:

Բանալի բառեր. անվանապատում, տեղանունների ստուգաբանություն, բնիկ հայերեն տեղանուններ, իրանական անվանումներ, թուրք-թաթարական անվանումներ, հունական անվանումներ, ռուսական

անվանում, պրակտիկ ուղղվածություն, ինքնուսուցում, դեպքի ուսումնասիրություն:

Կյանքը հասարակությանն ապրելու և գործելու նոր ռազմավարություն է պարտադրում, և այդ նոր ռազմավարության մշակումն էլ ամենաընդհանուր իմաստով կազմում է ժամանակակից կրթական քաղաքականության բովանդակությունը:

Այսօր կրթության մեջ մեծ կարևորություն է տրվում ուսուցման պրակտիկ ուղղվածությանը. ուշադրություն է դարձվում այն գիտելիքներին ու կարողություններին, որոնք կիրառություն կգտնեն գործնական կյանքում:

Աշխարհի, սեփական երկրի հանդեպ երեխաների բնատուր հետաքրքրությունը, որն ուսումնառության իրական դրդապատճառ է, պետք է խթանվի ժամանակակից դպրոցում: Ուսուցման կիրառվող տեխնոլոգիաները պետք է նպաստեն բացահայտելու սովորողի հակումներն ու ընդունակությունները, ինտելեկտուալ ներուժը: Դեպի պրակտիկական կողմնորոշված ուսուցման նպատակը գիտելիքները կյանքին կապելն ու դրանք առավել հետաքրքիր դարձնելն է: Այս պարագայում սովորողը հասկանում է իր ձեռք բերած գիտելիքների կենսական նշանակությունն ու իմաստը, որն ապահովում է գիտելիքների իմաստավորված յուրացում:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Ասել է, թե՝ սովորողների ուսումնական գործունեությունը կազմակերպել որպես ուսումնաձեռնազոտական գործունեություն: Ուսումնական աշխատանքները, որ կատարում է սովորողը դպրոցում թե տանը, պետք է ունենան հետազոտական գործունեության տարրեր, և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով պետք է ավելանա: Հանրակրթության առարկայական չափորոշչում՝ *հայոց լեզվի վերջնարդյունքների ստեղծարարություն*

հասկացության մեջ, գրված է. «Ստեղծի տարաբնույթ *ուսումնական ցուցադրական նյութեր՝ պատտառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անխմացիա, տեսանյութ և այլն, և փաստարկված մեկնաբանություններով ներկայացնի*» [5]:

Սույն նյութի ուսուցման գործընթացը ցուցադրելու համար ընտրել ենք «Դեպքի ուսումնասիրություն» մեթոդը, որը ներառում է տարբեր մեթոդների բաղադրիչներ: Կախված ուսումնասիրվող դեպքի բնույթից՝ ուսուցիչը կարող է դիմել մտազրոհի, բանավեճի, համագործակցային խմբերով աշխատանք կազմակերպելուն և այլն: «Դեպքի ուսումնասիրություն» մեթոդի քայլաշարերը (ալգորիթմները) փորձենք սահմանել հետևյալ հաջորդականությամբ.

- ա.** անհրաժեշտ ուսումնական նյութերի տրամադրում,
- բ.** ուսումնական նյութերի հետ աշխատելու կարողություններ,
- գ.** գրավոր խոսքի վերլուծություն, դասակարգում, խմբավորում, հիմնավորում,
- դ.** անհրաժեշտ փաստերի գրավոր շարադրանք,
- ե.** որոշակի ծավալով ներկայացված լեզվական երևույթի նկարագրություն,
- զ.** վերլուծական (քերականական) կարողություններ,
- է.** նյութի մատուցում որպես ուսումնասիրություն կամ ներկայացվող դեպքի նկարագրություն,
- ը.** խմբային աշխատանքի կարողություններ,
- թ.** միասնական պատասխանատվություն,
- ժ.** որոշումների համատեղ կայացում:

Սովորողների քննարկմանն են ներկայացվում դիտարկվող հետազոտության թեման՝ «Հայկական տեղանունների անվանապատման ուսումնասիրություն», և առաջադիր խնդիրները.

- ա.** Առանձնացնել անվանման պատմություն ունեցող մի շարք տեղանուններ:
- բ.** Խմբավորել վերոնշյալ տեղանուններն ըստ բնիկ և փոխառյալ տեսակների:
- գ.** Ուսումնասիրել տեղանունների ծագումն ու ստուգաբանությունը:
- դ.** Ներկայացնել տեղանունների անվան հետ կապված պատմական իրողությունները, ավանդագրույցները:

Հետազոտության համար առաջարկում ենք ուսումնական տարարնույթ նյութեր՝ բառարաններ, հանրագիտարաններ, դասագրքեր, կայքէջեր:

Աշխատանքը կձևավորի սովորողների ճանաչողական, վերլուծական, հետազոտական-որոնողական կարողությունները:

Ըստ առարկայական ծրագրի՝ հատկանունների ուսուցումը ներառված է հանրակրթական դպրոցի 7-րդ և ավագ դպրոցի 11-րդ դասարաններում, համալսարանական ծրագրերում:

Աշխատանքը հատկապես կհետաքրքրի ավագ դպրոցի 11-րդ դասարանի սովորողներին, քանի որ այն գուտ լեզվական նյութի ուսումնասիրություն չէ, այլև ենթադրում է պատմական և աշխարհագրական տվյալների հետազոտություն: Հանրակրթության նոր չափորոշիչի 11-րդ դասարանի հայոց լեզվի առարկայական ծրագրում ընդգրկված «Բառարանագրություն» բաժնում հատուկ անդրադաժ կա բառարանների տեսակներին, որտեղ էլ առաջարկվում են հետաքրքիր աշխատանքներ, ինչպես, օրինակ՝ «Տեղանունների բառարանից *դուրս գրել* որևէ համայնքի աշխարհագրական անունների բացատրությունները: *Գտնել և ներկայացնել* հետաքրքիր պատմություններ, ավանդազույցներ տեղանունների առաջացման մասին» [5]: Մեր կողմից նախատեսված աշխատանքը հենվում է արդեն ուսումնասիրված և հողվածում ներկայացված տեղանունների վրա՝ ստիպելով սովորողներին դրանց շուրջ հետաքրքիր աշխատանք կատարել: Սովորողները կարող են նաև իրենք կատարել ուսումնասիրությունները, և ինչպես առաջարկվում է առարկայական ծրագրում, իրենց հետազոտության վրա կատարեն դեպքի ուսումնասիրություն: Այսպիսով՝ ուսումնական գործընթացում ապահովվում են նաև միջառարկայական կապերը:

Դեպքի ուսումնասիրության մեթոդի կիրառման ընթացքում դասարանը բաժանում ենք չորս խմբի՝ նախապես որոշելով խմբերին տրվելիք առաջադրանքները:

1-ին խմբի դեպքի ուսումնասիրության նյութը բնիկ հայերեն տեղանուններն են և դրանց անվանադրման հետ կապված ավանդապատումները:

2-րդ խմբի ուսումնասիրության դեպք է դառնում այն տեղանունների ստուգաբանությունը, որոնք պատմական որոշակի ժամանակահատվածում փոխարինվել են իրանական անվանումներով:

3-րդ խմբի դեպքի ուսումնասիրությունը այն տեղանունների ստուգաբանությունն է, որոնք պատմական որոշակի ժամանակահատվածում փոխարինվել են թուրք-թաթարական անվանումներով:

4-րդ խումբը ուսումնասիրում է այն տեղանունները, որոնք պատմական որոշակի ժամանակահատվածում ունեցել են հունական, ռուսական կամ եվրոպական անվանումներ:

Սովորողները մեկ-երկու էջի սահմաններում շարադրում են փաստերը՝ մեկ կամ մի քանի տեսանկյուններից ներկայացնելով դիպվածները պարզեցված կամ բարդեցված տարբերակներով: Աշխատանքի ընթացքում բացահայտվում են փաստեր, որտեղ առկա են ստուգաբանման որոշ հակասություններ:

Դեպքի ներկայացումը ենթադրում է անհրաժեշտ օրինակների ընտրություն և ներկայացում. աշխատանքը կատարելիս կարևոր է նաև ժամանակին հետևելը. այս ծավալի խմբային աշխատանքաին տրամադրվում է մեկ կամ մի քանի ժամ:

Ուսումնասիրության հիմնախնդիրը տեղանունների տարբերակման այն սկզբունքն է, որ օտար անվանումների մի մասը մնացել է խոսակցական մակարդակում, ինչպես՝ *Ղարափղիսա*, *Կիրովական*, *Բասարզեշար*, մինչդեռ մի շարք տեղանունների օտար անվանումներ այսօր պետականորեն ընդունված անվանումներ են, ինչպես՝ *Գյումրի*, *Ալավերդի*, *Դիլիջան* և այլն:

1-ին խումբը ուսումնասիրում է *Արագած* և *Սևան* տեղանունների ստուգաբանությունը:

Արագածը Հայաստանի Հանրապետության ամենաբարձր քառազագաթ լեռն է (4096 մ): Արագածի անվան ծագումը պատմիչները կապում են Արա աստծո հետ (*Արագած* բառը վերծանվում է այսպես՝ Արա+գահ=Արայի գահ) [2, էջ 677]: Ավանդությունը պատմում է, որ երբ Արա Գեղեցիկ թագավորը ընկավ Շամիրամի դեմ կռվում, հայերը շատ մտահոգվեցին. մտահոգություններից մեկն էլ կապված էր Արա Գեղեցիկի ադամանդակուռ շքեղ գահի հետ, որին ցանկանում էին տիրանալ Շամիրամի զորականները: Հայերն այն թաքցրին

քառագագաթ լեռան վրա: Թշնամին այդպես էլ չկարողացավ այն գտնել, իսկ երբ ձյունը ծածկեց լեռը, գահի հետքն անգամ հայերը կորցրին: Ժամանակ անցավ, սակայն մարդիկ այդպես էլ չմոռացան Արայի գահը: Նայելով քառագագաթ լեռանը՝ նրանք ասում էին, որ այնտեղ է Արայի գահը: Այդպիսով՝ լեռը կոչվեց *Արագահ*, որ, հետագայում հնչյունափոխվելով, դարձավ *Արագած* [1, էջ 28]: Արագածը նաև թուրքական անվանումներ է ունեցել՝ Ալագյազ, Ալագյոզ, Արակյազ, Էլագյոզ, որ թուրքերենից թարգմանաբար նշանակում է *բազմագույն աչք* (alaş gۆyնqգույն, բազմերանգ, gۆyз` աչք [9, էջ 147]:

Սևանը քաղաք է Գեղարքունիքի մարզում: Նախկին անուններն են Սառցաշեն, Ելենովկա: Սևան է վերանվանվել 1930-ական թվականներին: Որոշ հնագետներ Սևան անվանումը նույնացնում են սեպագիր արձանագրություններում հիշատակված *Սունիա* անվանը [3, էջ 576]: Ըստ ավանդության՝ վանեցիները գաղթում և վերաբնակվում են Սևանի ափերին՝ որոշելով, որ դա էլ մի Վան է: Սակայն շուտով տեղի ցուրտ կլիման նրանց դուր չի գալիս. հիշում են իրենց երկրի մեղմ ու տաք բնությունը, բարեկեցիկ կյանքը և ասում՝ *սև Վան եկավ գլխներին, սև Վան*: Այսպես էլ առաջանում է *Սևան* անունը [4, էջ 80-81]:

2-րդ խումբն ուսումնասիրում է *Աշտարակ*, *Եղեգնաձոր*, *Սպիտակ* տեղանունների ստուգաբանությունը:

Աշտարակ (Արագածոտնի մարզկենտրոնը) քաղաքի անվանումը իրանական ծագում ունի. նշանակում է *ուղիղ բարձրացող կառույց, բերդապարսպի բուրգ, սլացիկ բարձրաբերձ շինություն*: Հակոբ Մանանդյանը այս տեղանունը նույնացնում է 4-րդ դարի Պևտինգերյան քարտեզում նշված Strangira կայարանի հետ՝ ենթադրելով, որ բառն ունի նախահայկական ծագում, երբ դեռ «աշտարակ» բառը հայերենում գործածական չէր [12]: Կա մի ավանդություն՝ կապված անվան ծագմանը. մի քանի հազար տարի առաջ այս կողմերում մարդիկ ապրում էին միայն Արարատյան դաշտի ցածրադիր մասերում՝ Արաքսի գետահովտում, որտեղ եղանակը մեղմ էր: Մարդկանց բազմանալու պատճառով դաշտում ապրողների մի մասն սկսեց տարածվել դեպի մոտակա լանջերը, մի մասն էլ բնակություն հաստատեց Աշտարակում: Արաքսի համեմատությամբ այդ վայրը բարձր էր աշտարակի պես: Այդ է պատճառը, որ տեղանքը անվանվեց *Աշտարակ*, չնայած այդտեղ ոչ մի աշտարակ չկար [1, էջ 21]: Որոշ հետազոտողներ կարծում են՝ անունը

առաջացել է *աշտարակ* հայերեն հասարակ գոյականից: Գրիգոր Ղափանցյանը բնակավայրի անունը կապում է ասուրա-բաբելական *Բշտար* աստվածուհու անվանը [3, էջ 297]:

Եղեգնաձոր քաղաքը Սյունիքի հնագույն ուստաններից մեկն է: Հնում բնակավայրը կոչվել է Խոտորալեզ, ավելի ուշ՝ օտար անվանմամբ՝ Քեշիշքենդ. բառը պարսկերեն է՝ *քեշիշ* (պարսկերեն) *keşis* – քահանա և *քենդ* (պարսկերեն) *kend*– գյուղ. *kend* բառը պարսկերենից փոխառել է թուրքերենը *քաղաք* նշանակությամբ [9, էջ 156]: Կա մեկ այլ տեսակետ, որ *քենդ* (*kent*) բաղադրիչը թուրքերենին անցել է հունարենից, որում ևս *քենդ*–ը քաղաք է նշանակում [6, էջ 268]: 1935-57 թթ. քաղաքը կոչվել է Միկոյան՝ ի պատիվ ԽՍՀՄ պետական գործիչ Անաստաս Միկոյանի, իսկ 1957 թվականից հետո՝ Եղեգնաձոր: Բնակավայրը հիմնադրման օրից մինչև 19-րդ դարը կոչվել է Եղեգիք կամ Եգեգյաց, որ, հետագայում փոփոխվելով, դարձել է Եղեգնաձոր [2, էջ 501]: Անվանադրման հետ կապված է հետևյալ ավանդապատումը: Թշնամին գրավում է ավանն ու ամրոցը, սակայն բնակիչներին գերեվարել չի կարողանում. ավանի շրջակայքում եղեգնապատ լճակներ են լինում, որոնցում թաքնվում են մարդիկ՝ գաղտնուղիներով փախչելով ամրոցից: Այստեղից էլ Եղեգիք կամ Եղեգյաց անվանումը, որ ձևափոխվել և դարձել է Եղեգնաձոր [1, էջ 91]:

Սպիտակը քաղաք է Լոռու մարզում: Մինչև 1949 թ. կոչվել է Համամլու կամ Համամի, ինչը, ամենայն հավանականությամբ, պարսկական «համամ» - բաղնիք բառից է. այս են վկայում քաղաքում հայտնաբերված կավե մեծ կարասներն ու խողովակները: Կա նաև տեսակետ, որ համամ-ը արաբերեն բաղնիք բառն է և -լու / -լի ունեցող նշանակող վերջածանցը՝ «Բաղնիք ունեցող վայր»: Ներկայիս Սպիտակ անունը նրա շրջակայքում եղած սպիտակ կրաքարի հանքերի հետևանք է [2, էջ 73]:

3-րդ խումբն ուսումնասիրում է *Ալավերդի, Ծաղկաձոր, Ստեփանավան, Վանաձոր* տեղանունների ստուգաբանությունը:

Ալավերդի քաղաքը բնակավայր է եղել դեռևս հին ժամանակներում. այդ են վկայում տարածքում հայտնաբերված հնագիտական առարկաները: Եղել է Անդրկովկասի մետաղագործական կարևոր օջախ: Տարածքը հայտնի է դեռևս Արտաշես Առաջին թագավորի ժամանակներից (*մ.թ.ա. 189 – 160*): Պատմական

աղբյուրներում հիշատակվում է Մանես կամ Մանասգոմեր, Մանից Գոմ, Մանից Գոմեր անուններով: 17-րդ դարում Ալավերդին և նրա շրջակայքը դառնում են թուրք բորչալու ցեղի արոտավայրերը: Անվանումը մնացել է այդ ցեղի ցեղապետներից մեկի՝ Ալլահվերդի մոլլա օղլի Թարխանի անունից [2, էջ 139] *Ալավերդի*- հիբրիդ բառ է՝ կազմված Allah արաբերեն և verdi թուրքերեն vermek՝ տալ - «տվեց» բայի անցյալ կատարյալի ձևից [9, էջ 51]:

Ծաղկաձոր քաղաքը հնում կոչվել է Ծաղկոցաձոր, այնուհետև՝ Ծաղկունյաց ձոր, մտել է Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառի մեջ: Եղել է հայոց Արշակունի թագավորների ամառանոցը: 16-րդ դարում անվանվել է Դարաչիչակ. սա Ծաղկունյաց ձորի թուրքերեն պատճենումն է՝ բառացի թարգմանությունը. դարա (թուրքերեն) – ձոր, չիչակ (թուրքերեն çişek) – ծաղիկ [9, էջ 962]: 1947 թ. քաղաքը վերանվանվեց Ծաղկաձոր [2, էջ 110]: Ըստ ավանդության՝ հեռուներից եկած մի դյուցազուն հետապնդում էր հայոց գեղեցկության և սիրո աստվածուհի Աստղիկին: Նա փախչում էր ու զգում, որ հսկան հասնում է իրեն: Այդ պահին լսում է իր քրոջ՝ ողջախոհության աստվածուհի Նանեի փափսուքը. «Հանի՛ր ու մի կո՛ղմ նետի՛ր գեղազարդ թիկնոցը»։ Աստղիկն անում է այնպես, ինչպես ասում է քույրը, և թիկնոցը ծածկվում է մառախուղով ու փակում հսկայի տեսադաշտը: Հազար տարի հետո Նանեի արձակած մառախուղը բարձրանում է, ու մարդիկ տեսնում են, որ Աստղիկի գետնամած թիկնոցը դարձել է ծաղկավետ մի հովիտ: Այն կոչում են Ծաղկաձոր [1, էջ 108]:

Ստեփանավան քաղաքը կազմել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի մի մասը: Մինչև 1923 թ. Կոչվել է Ջալալօղլի: Ջալալօղլին հիբրիդ բառ է. կազմված է Ջալալ -արաբերեն փառք, մեծություն և օղլի թուրքերեն օջև – որդի բառերից [9, էջ 894]: 1923 թ. անվանվել է հայ հեղափոխական Ստեփան Ծախումյանի անվամբ՝ Ստեփանավան: Որպես բնակավայր՝ գոյություն է ունեցել հին ժամանակներից [3, էջ 685]:

Վանաձոր քաղաքի անվանումը նոր է, սակայն այն իր հետևում մի քանի հին անվանումներ ունի՝ Գարաքիլիսե, Կարաքիլիսա, Ղարաքիլիսա, Մարտունական, Մարտունաշեն: Խորհրդային տարիներին այն կոչվում էր *Կիրովական*՝ ի պատիվ ռուս բոլշևիկ, Խորհրդային Միության պետական գործիչ Սերգեյ Կիրովի: Քաղաքը

Վանաձոր է վերանվանվել 1989 թվականին [3, էջ 149]: Ղարաքիլիսա անվան մասին ժողովրդական ավանդությունը պատմում է, որ թուրք փաշան իր գործով մտնում է գյուղ, ավերում այն և գործը տեղավորում եկեղեցում՝ գիշերելու, իսկ ինքը մի քանի հոգու հետ տեղավորվում է գյուղի մեծահարուստներից մեկի տանը: Գյուղի երիտասարդները գիշերը իջնում են սարերից, կոտորում գործը ու էլի քաշվում սարերը: Առավոտյան փաշան, տեսնելով գործի կոտորվելը, բացականչում է՝ *ղարա(սև) քիլիսա(եկեղեցի)*, որ սևացրեց իր բանակը: *Ղարա* - *Kara*-թուրքերեն սև և *քիլիսա*, որ թուրքերենն իր հերթին փոխառել է *էկկիսիս* հունարեն բառից, նշանակում է $\epsilon\kappa\kappa\lambda\eta\sigma\acute{\iota}\alpha \rightarrow$ եկեղեցի [9, էջ 815]: Մեկ այլ կարծիք կա, որ այն սկզբնապես ունեցել է «սև քարերով եկեղեցի» իմաստը. հատկապես գմբեթի և զանգակատան դեպքում էին այդպես կոչվում, հաջորդ դարերում տիրապետողների կողմից թարգմանվել ու դարձել է Ղարաքիլիսա: Իսկ ըստ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի՝ *ղար* պարսկերենից թարգմանաբար նշանակում է *մեծ*, ոչ թե *սև*: Այս բառիմաստի պարզաբանումը հասկանալի է դարձնում *Ղարաքիլիսա* անվան իրական նշանակությունը, ըստ որի՝ տեղանունն առաջացել է Թադեոս առաքյալի վանքին տրված Ղարաքիլիսա անունից և թարգմանվել է Սև եկեղեցի՝ նկատի ունենալով հին եկեղեցու՝ մուգ գույնի քարերով շարված լինելը [4]: Վանքի՝ 19-րդ դարում սպիտակ ավազաքարից կառուցված հատվածը շատ ավելի մեծ է և իր ձյունաթույր ճերմակությամբ նույնիսկ հեռվից տեսանելի է մթնոլորտի մեջ: Այսպիսով՝ ըստ Ատրպատականի բարբառների նորագույն ուսումնասիրությունների՝ Ղարաքիլիսա նշանակում է ոչ թե *սև եկեղեցի*, այլ *մեծ, կարևորագույն եկեղեցի* [4]:

4-րդ խումբն ուսումնասիրում է *Արտաշատ*, *Գյումրի*, *Դիլիջան* տեղանունների ստուգաբանությունը:

Արտաշատ քաղաքը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Ոստան գավառում: Կոչվել է նաև Արտաշաշատ, Արտաշար, Արտաքսադ, Արտաքսատե, Արտաքսիասատա: Բաղաբը հիմնադրել է Արտաշես Առաջինը [3, էջ 494]: Այն մ.թ.ա. 2-րդ-մ.թ. 5-րդ դարերում եղել է հին Հայաստանի մայրաքաղաքը: Անվանման ստուգաբանություններից մեկը կապվում է հունարեն *Aptakata* – *Արտաշեսի ուրախություն* արտահայտության հետ: Կա նաև տեսակետ,

որ անվանումը հիբրիդ բառ է, և «շատ» պարսկերեն նշանակում է *սպրեյում տեղ, ակալն* [2, էջ 135]:

Գյումրի քաղաքը գտնվում է ՀՀ Շիրակի դաշտում: Հնագույն բնակավայր է. հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում բնակավայրում գտնվել են դեռևս մ.թ.ա. 2-րդ հազարամյակին վերագրվող առարկաներ: 8-րդ դարում կոչվել է Կումայրի (**անունը հիշատակում է Ղևոնդ պատմիչը**), այնուհետև՝ Գումրի: 1837 թ. ռուս Նիկոլայ Առաջին կայսեր այցելությունից հետո քաղաքն անվանվում է նրա կնոջ՝ Ալեքսանդրայի անվամբ՝ Ալեքսանդրապոլ, իսկ 1924 թ-ից անվանվել է Լենինական ռուս հեղափոխականի անունով [2, էջ 543]:

Դիլիջան քաղաքի (ՀՀ Տավուշի մարզ) անվանումը համեմատաբար նոր ժամանակների ծնունդ է: Ենթադրվում է, որ բնակավայրի հին անվանումը եղել է Հովք, որն Արշակունի թագավորների ժամանակ ամառանոց էր և արքունի որսատեղի [3, էջ 782. էջ 385]: Գրավոր աղբյուրներում այն առաջին անգամ հիշատակվում է 17-րդ դարում ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի ճանապարհային գրառումներում: Նա գրում է, որ իրենք հասել են Դիլիջան կոչվող քաղաք, որտեղ կա երեք հարյուր տուն [14]: Նույն ժամանակաշրջանի հետ կապված մեկ այլ ստուգաբանություն կա: 17-րդ դարում եվրոպացի երկու քարոզիչ է գալիս Աղստևի ձորահովիտ՝ հայերին կաթոլիկացնելու: Այստեղ մի մեծ կառք են պատրաստում, զարդարում սրբապատկերներով, կառքը անվանում դիլիժանս: Այն դառնում է քարոզիչների բնակարան- քարոզատեղին: Նրանք նաև այս կառքից հայերին զանազան դեղեր էին վաճառում: Մարդիկ անընդհատ կրկնում էին՝ *դիլիժանս, դիլիժանս*, և քաղաքի անունը դառնում է *Դիլիջան* [1, էջ 87]: *Դիլիջան* անվան ծագման մասին մի քանի պատմություններ էլ կան. ոմանք այն կապում են *Դիլիջան* անունով ոմն իշխանի անվան սիրո պատմության հետ, ոմանք էլ՝ Դելի կամ Դիլի անունով մի մարդու հետ, ում գայլերը հոշոտել են, և նրան որոնող հարազատները, երկար ժամանակ նրան փնտրելով, կանչել են՝ Դիլի ջան, Դիլի ջան, որից էլ առաջացել է *Դիլիջան* անվանումը [3, էջ 110]:

Վարդենիսը քաղաք է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի ափին: Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Այստեղ հայտնաբերվել են բրոնզի դարի դամբարաններ: Կոչվել է նաև

Վասակաշեն, Գեղամաբակ, Բասարգեչար [3, էջ 782]: Ըստ Ղ. Ալիշանի՝ այստեղ է գտնվել Վասակ Գաբուռի ապարանքը, ուստի բնակավայրը հնում կոչվել է Վասակաշեն: Մինչև 1969 թ. բնակավայրը կոչվել է Բասարգեչար, որ, ըստ տեղաբնակների, մոնղոլ-թաթարերենից թարգմանաբար նշանակում է *նորի տակ տվեցինք, անցանք*: Այսօր այն կոչվում է Վարդենիս հավանաբար ծաղկաշատ, վարդերով հարուստ լինելու պատճառով:

Աշխատանքային խմբերն իրենց տրամադրության տակ կարող են ունենալ անհրաժեշտ և լրացուցիչ տվյալներ. ինչպես, ասենք՝ 3-րդ խմբի դեպքում ներկայացվելիք հետևյալ նյութը, որ սովորողներին հասանելի կլինի էլեկտրոնային նշված հղումով՝ [Հայկական տեղանունների թյուրքականացումը](#):

«Հայաստանի տեղանունների թյուրքացումն սկսվել է 13-րդ դարից և ավելի խորացել 16-17-րդ դարերում՝ օսմանյան և սեֆյան տիրապետությունների հաստատման հետ: Հայկական տեղանունների յուրացումը կատարվել է խոսակցական մակարդակում. մի դեպքում՝ դրանք հարմարեցվել են թյուրքերենի արտասանությանը՝ Ագարակ-Էքրեք, Աղստև-Աղստաֆա, Գավառ-Գևեռ, Կարկառ-Գյառգյառ, Հարժիս-Յայջի, Ձագեձոր-Չանգեզուր, Շահապոնք-Շահբուզ, Շիրակ-Շորագյալ, Վանք-Ֆենք, Կումայրի-Գյումրի, Կարս-Ղարս և այլն, մի այլ դեպքում՝ դրանք պատճենումներ են՝ բառացի թարգմանություններ, ինչպես՝ Ազնվաձոր-Գեոգալդարա, Աղջկաբերդ-Ղըզդալա, Ամուլսար-Ղըսըրդաղ, Արեգունի-Գյունեյ, Ճաղկուտ-Գյուլիջա, Կարմիրաղբյուր-Ղըզըլբուլաղ, Ջորագյուղ-Դարաքենդ, Մոխրոց-Քյոմուռլու, Ջերմուկ-Իստիսու, Սև լիճ-Գարա գյուղ և այլն: Գործընթացները եղել են նաև իմաստային-հնչյունական պատճենումների տեսքով, երբ հայերենից թյուրքերենին անցած անվանումները՝ թե՛ հնչյունական կազմով և թե՛ իմաստով, համապատասխանում են նախաձևին՝ Աղբերք-Աղբուլաղ, Աղխասար-Ախիդաղ և այլն: Կան տեղանվանումների պատճենումներ, որտեղ թյուրքերեն են թարգմանվել միայն տեղանվան եզրերը՝ պահպանելով բուն անունը՝ Այրիգետ-Այրիչայ-Այրիսու և այլն»:

Հավաքագրած տեղեկությոթը կարող է մատուցվել որպես փաստագրական նյութ կամ ներկայացվել խոսքային և տեսողական միջոցներով (տեսագրություն կամ լուսապատկերների ցուցադրություն):

Կարծում ենք՝ անհերքելի է մեթոդի արդյունավետությունը փաստերի, դեպքերի և գործնական օրինակների ուսումնասիրությամբ ու վերլուծությամբ տեսական նյութն ավելի խոր ու իրատեսորեն ըմբռնելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Խաչատրյան Հ.* Հայկական տեղանվանապատում, Երևան, Հայկ Խաչատրյան հրատ., 2025:
2. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 1, 2, 3, 4, 5, 11, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1974, 1977, 1978, 1979, 1985:
3. *Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.*, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 1, 2, 3, 4, Երևան, 1986, 1988, 1991, 1998:
4. Հայկական նարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, Դաշտային և գրադարանաարխիվային ուսումնասիրություններ: <https://armenianarchitecture.org/am/locations/200>, Դիտումը՝ 15.01.2026:
5. ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանը (07.05.2024 N37-Ն) «Հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-ին և 4-րդ դասարանների «Մայրենի», 9-րդ և 12-րդ դասարանների «Հայոց լեզու», 9-րդ դասարանի «Գրականություն», 12-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկաների ծրագրերը հաստատելու մասին», <https://www.arlis.am/hy/acts/192783>, Դիտումը՝ 15.02.2026:
6. *Ղազարյան Ռ.* Թուրքերեն-հայերեն բառարան, 2003:
7. *Ղանալանյան Ա.* Ավանդապատում, Երևան, 1969:
8. Türkçe Sözlük, Gözden Geçirilmiş, Altinci Baskı, Bilgi Basımevi - Ankara, 1974:
9. *Mustafayev E. M.-E. ve Şçerbinin V. G.* Русско-турецкий словарь, rusça-türkçe sözlük, , Sovetskaya entsiklopediya yayınevi, Moskova-1972:
10. «*Վասակաշեն [Բասարգեշար/հնում՝ Վասակաշեն]*», հոդված, ՀՍՍՌ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայոց պատմություն, հնագիտություն, Երևան, ՀՍՍՌ ԳԱ. file:///C:/Users/Admin/Downloads/293759_.pdf, Դիտումը՝ 19.01.25:
11. Communities Association of Armenia (CAA) Armenian Discovery կայքէջեր:
12. <https://www.dasaran.am/apps/wiki/view/id/7602>, Դիտումը՝ 15.01.25:

13. <https://www.majstro.com/Web/Majstro/bdict.php?gebrTaal=eng&bronTaal=tur&doelTaal=eng&teVertalen=ke%C5%9Fi%C5%9F>, Turkish-English Online Dictionary, Դիտումը՝ 16.01.26:
14. <https://www.gotodili.com/am/about/history/> Go to Dili նախագիծ, Դիտումը՝ 14.01.26:

REFERENCES

1. *Khach'atryan H.* Haykakan teghanvanapatum, Yerevan, Hayk Khach'atryan hrat., 2025:
2. Haykakan sovetakan hanragitaran, hator 1, 2, 3, 4, 5, 11, Yerevan, HSSH GA, 1974, 1977, 1978, 1979, 1985:
3. *Hakobyan T'. Melik'-Bakhshyan S., Barseghyan H.*, Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri barraran, hator 1, 2, 3, 4, Yerevan, 1986, 1988, 1991, 1998:
4. Haykakan chartarapetut'yunn usumnasirogh himnadram, Dashtayin yev gradaranaarkhivayin usumnasirut'yunner // <https://armenianarchitecture.org/am/locations/200>, Ditumy, 15.01.2026:
5. HH KGMS nakharari hramany (07.05.2024 N37-N) «Hanrakrt'akan usumnakan hastatut'yunneri 1-in yev 4-rd dasaranneri «Mayreni», 9-rd yev 12-rd dasaranneri «Hayots' lezu», 9-rd dasarani «Grakanut'yun», 12-rd dasarani «Hay grakanut'yun» arrarkaneri tsragrery hastatelu masin», <https://www.arlis.am/hy/acts/192783>, Ditumy, 15.02.2026:
6. *Ghazaryan R.* T'urk'eren-hayeren barraran, 2003:
7. *Ghanalanyan A.* Avandapatum, Yerevan, 1969:
8. Türkçe Sözlük, Gözden Geçirilmiş, Altinci Baski, Bilgi Basimevi - Ankara, 1974:
9. *Mustafayev E. M.-E. ve Şçerbinin V. G.* Russko-tureckij slovar', rusça-türkçe sözlük, , Sovetskaya entsiklopediya yayinevi, Moskova-1972:
10. «Vasakashen [Basargech'ar/hnum, Vasakashen/», hodvats, HSSRR hnagitut'yan yev azgagrut'yan institut, Hayots' patmut'yun, hnagitut'yun, Yerevan, HSSRR GA. file:///C:/Users/Admin/Downloads/293759__.pdf, Ditumy, 19.01.25.
11. Communities Association of Armenia (CAA) Armenian Discovery kayk'ejer.
12. URL: <https://www.dasaran.am/apps/wiki/view/id/7602>, Ditumy, 15.01.25.
13. URL: <https://www.majstro.com/Web/Majstro/bdict.php?gebrTaal=eng&bronTaal=tur&doelTaal=eng&teVertalen=ke%C5%9Fi%C5%9F>, Turkish-English Online Dictionary, Ditumy, 16.01.26:
14. <https://www.gotodili.com/am/about/history/> Go to Dili nakhagits, Ditumy, 14.01.26

ИЗУЧЕНИЕ АРМЯНСКИХ ТОПОНИМОВ В СРЕДНЕЙ ШКОЛЕ

Р. П. ДЖУЛЬФАЯН

**АГПУ имени Хачатура АБОВЯНА,
ФРАНЦУЗСКИЙ УНИВЕРСИТЕТ В АРМЕНИИ**

Г. Н. ВАРДАНЯН

**ФРАНЦУЗСКИЙ УНИВЕРСИТЕТ В АРМЕНИИ,
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС «ЛИЦЕЙ
ИМ.ШИРАКАЦИ»**

С. Ф. ТОРГОМЯН

АГПУ имени Хачатура АБОВЯНА

Статья посвящена преподаванию армянских топонимов в 11-м классе средней школы. Изучение этимологии армянских топонимов, осуществляемое посредством сравнительного анализа различных источников, представляет собой ценный материал для проведения исследований с использованием новаторских методов. Предлагаемый метод — тематическое исследование — позволит старшеклассникам всесторонне изучить материал, выявить как интересные, так и неожиданные аспекты возникновения топонимов и проанализировать их, развивая способности критического мышления.

***Ключевые слова:** Наименование, этимология топонимов, исконно армянские топонимы, иранские названия, тюрко-татарские названия, греческие названия, русские названия, практическая направленность, самообучение, анализ конкретных случаев.*

THE STUDY OF THE NAME DEFINITION OF ARMENIAN PLACE NAMES IN HIGH SCHOOL

R. P. JULFAYAN

Kh. Abovyan ASPU, French University in Armenia Foundation

G. N. VARDANYAN

French University in Armenia Foundation,

"Shirakatsi Luceum" International Scientific- Educational Complex

S. F. TORGOMYAN

Kh. Abovyan ASPU

The article is dedicated to the teaching of Armenian place names in the 11th grade of high school. The study of the etymology of Armenian place names, conducted through the comparative analysis of various sources, provides excellent material for research using interesting and innovative methods. The proposed method, a case study, will enable high school students to examine the material comprehensively, uncover interesting and sometimes surprising aspects of the origins of place names, analyze them, and draw conclusions developing the foundations of critical thinking.

Key words: *Naming, etymology of place names, native Armenian place names, Iranian names, Turkic-Tatar names, Greek names, Russian names, practical orientation, self-study, case study.*

Информация о статье: статья поступила в редакцию 11 марта 2026 г., подписана к печати в № 1.CXXII (122).2026 30.05.2026.